

ՍԻՈՆ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 3·

ԱՄՍԱԳԻՐ

ՄԱՐՏ 31
1876·

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ

Ամսոցս 8էն, 19ն կատարուեցան Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանի տարեկան հարցաքննութիւնքն 'ի ներկայութեան Պատուարժան Միաբանից և Ուխտաւորաց ոմանց։ Այն հարցաքննութեան արդիւնքն զետեղուած է 'ի վերջ Սիոնի առանձին յուցակաւ, յորմէ հարցասէր ընթերցողք և ծնողք կարեն տեսնել իւրաքանչիւր աշակերտի վարուց և յառաջադիմութեան չափն ու կշիռն։

Ժառանգաւորաց Վարժարանի հարցաքննութենէն զինի մասնաւորքննութիւն եղաւ նաեւ քաղաքիս հայ օրիորդաց Դպրոցին մէջ և ապա հետզհետէ կատարուեցան աշակերտուհեաց ձեռագործաց վիճակահանութեան և Ժառանգաւորաց պարգեւաբաշխութեան հանդէսներն։

Այն հանդէսներուն ներկայ էր ոչ միայն Ս. Աթոռոյս Նախագահն միաբանական ուխտիւ հանդերձ, այլ եւ Ուխտաւորաց բազմութիւնն։ Կարդացուեցան ճառեր, երգուեցան երգեր, խօսուեցան տրամախօսութիւններ և իւրաքանչիւր հանդէս կնքուեցաւ Ս. Նախագահի յորդորական ատենաբանութեամբ և օրհնութեամբ։

Արժան կը համարիմք Ժառանգաւոր Սանուց Պարգեւաբաշխութեան հանդիսին մէջ խօսուած Տրամախօսութիւնն և աշակերտուհեաց Վիճակահանութեան հանդիսին մէջ կարդացուած ճառն հրատարակել Սիոնի միջոցաւ։

digitised by A.R.A.R.@

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱԶԳԻ ՆԵՐԿԱՑ ՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱՑ

ԱՆՁԻՆՔ

ՀՐԱՀԱՏ. ՑՈՒՍԱԿ. ՆՈՐԱՑՐ. ԱՐԲՈՒՆ.

(Հրահոպ առանձինն նոտած գրասեղանի մը գլուխ լոգիր կը կարդայ . ուր կայ մի գաւառական նամակ . որ կը պատմէ Քիւրտ Պէյի մը Հայոց հասուցած նոր չարիքներ . յանկարծ ընթերցումը դադրեցնելով սրտի այլայլութենէն աթոռէն կ'ելլէ և մի քանի անգամ կը ձեմէ խռովեալ դէմքով . յետոյ հետեւեալ մենախօսութիւնը կընէ) .

Ա. ՍՏՈՒԱԾ իմ, տակաւին պատուհասիցդ չափը չը լցաւ . տակաւին Հայուն աղեկէզ ձայնը , դարերէ 'ի վեր նորա աչքէն հոսած արտասուքը եւ սրտէն բղխած արիւնը՝ գթութեան Աթոռիդ առջեւ չը հասաւ . տակաւին չը պիտի ծագի Հայուն համար խաղաղութեան , բարօրութեան եւ ուրախութեան օրը . չը պիտի հասնի այն վայրկեանը , որ այլ եւս Հայն իւր չորաբեկ հայրը , ուր ալ լինի , թէ 'ի հայրենիս , և թէ յօտարութեան , կարող ըլլայ անթաց աչօք և անվիշտ սրբտով ուտել . մինչեւ երբ այս դառն և անյոյս վիճակին մէջ պիտի տառապի . ամեն օր վիշտ , ամեն օր հարուած եւ հարստահարութիւն , եւ ամեն օր մահ անօրէն և անխիղճ քիւրտին ձեռքով . չը կայ կարեկից սիրտ մը , չը կայ մարդասէր հոգի մը և չը կայ օգնական ձեռք մի , որ աղատէ Հայուն հոգը , Հայուն ընտանեկան սրբութիւնը , պատիւը և կեանքը սրբապիղծ ճիրաններէ : Մի՞թէ քիչ էին Հայուն հին ցաւերը , հին վերքերը եւ կրած ամենադառն հարուածները , որ այսօր ալ , աղատութեան սուրբ անունը կրող դարուս մէջ , ուր ամեն ազգ բարոյական եւ նիւթական յառաջադիմութեամբ հոկայաքայլ կը դիմեն դէպ 'ի քաղաքակրթութիւն և դէպ 'ի փրկարար լուսաւորութիւն , մեր խեղճ ազգը թողուցեալ , որ այս մասին շատ յետ մնացած է . թողուցեալ որ խաւարը լոյսէն առաւել կը սիրէ և թողուցեալ , որ տակաւին դաստիարակութեան բուն նշանակութիւնը , դաստիարակութեան աղատարար ազդեցութիւնը լաւ հասկացած չ'է , անկարող է իւր օրապահիկ հացն պաշտպանել յարիշտակող ճիրաններէ , անկարող է իւր պատիւը կորզել օտար ձեռքերէ : Գոգցես՝ Հայուն անողոք ճակատագիրն է ամեն ժամանակ , ամեն դարու մէջ հալածուիլ , հարստահարուիլ և շարունակ արտասուել : Արտասուքն եղած է իւր միակ սփոփանքն , արտասուքը՝ իւր անբաժան ընկերը : Քանի կը մտածեմ սիրտս կը խշխշայ , աչքերս կը լեցուին եւ լեղուս բերնիս մէջ անշարժ կը կապուի : Արդեօք երկնից մէկ վճիռն է այս .

digitised by A.R.A.R.@

Աստուած իմ, սրտիս կսկիծէն քեզ դէմ կը մեղանչեմ. գիտեմ, որ մարդասիրութիւնդ չափ չ'ունի. գիտեմ, որ երկնից բարձունքէն կը հսկես ամենասանարդ ճրագին և որդին վերայ. առանց քու կամաց ճնճղուկներն իրենց յարկերէն վար չեն ընկնիր. քու նախախնամութեամբդ դաշտի շուշաններն գեղեցիկ կը զարդարուին. ինչպէս կարելի է, որ ողջոյն աղգ մի, մարդը քու որդիդ թշուառութեան մատնես։ Նախախնամութեանդ ճանապարհներն անհաս են մարդկային մտաց։ կը նստի,

Հրաքաւին խօսելու ատեն Յուսակ եւ Նորայր կը գան. բայց տակաւին Հրաքաւին չը հասած՝ ձայնը լսելով կանգ կ'առնուն. Յուսակ ասր Նորայր.

— Կը լսե՞ս մեր Հրահատ բարեկամին ձայնը. կարծես փոքրիկ տղու մը պէս կը լայ։ Արդեօք ինչ տարօրինակ բան պատահած է, մի գուցէ գլխուն մեծ ձախորդութիւն մի եկած լինի։

Նորայր. — Ի՞նչ ձախորդութիւն պիտի գայ. եթէ այդպիսի բան մի պատահած լինէր, մինչեւ ցարդ չէինք լսեր։ Ո՞վ գիտէ դարձեալ ինչ ոչ ինչ բան լսած կամ կարդացած է լրագրոյ մէջ։ Տակաւին չը հասկացար Հրահատի բնութիւնը. եթէ անձնական ամենամեծ անյաջողութիւն կրէ, այնչափ ցաւ և կսկիծ չը զգար, որչափ մեկու մի մասին անբաղդութեան համար բաւ առնէ։ Երթանք, կարծեմ սատիկ այլայլութենէ կը նուաղի.

Կը մտնեն եւ կը բարեւեն, բայց չը լսեր. յետոյ Նորայր ուսին դպչելով.

— Բարեկամ, ինչ վիճակի մէջ կը գտնեմք դքեզ. ինչ է կերպարանքիդ այլայլութիւնը, աչացդ կարմրութիւնը. եթէ չեմ սխալիր, արտասուած էք. Դուք ինչպէս կը տեսնէք, Յուսակ, ճշմարիտ կըսեմ, մեծ երկիւղ կը պատճառես մեզ այս դիրքովդ։

Յուսակ. — Ի՞նչպէս որ Դուք, նոյնպէս ես կը տեսնեմ. Հրահատ, ինչ կրնայ լինիլ Ձեր այս վիճակին պատճառը։ Զըլլայ թէ ձեր առանձնութիւնը վրդովելու դժբաղդութիւնը ունեցանք. կ'աղաչեմք, անկեղծօրէն ըսէք, եթէ մեր ներկայութիւնը ձեզ տաղտուկ կը պատճառէ, պատրաստ եմք մեկնելու։

Հրահատ. — Ի՞նչ կը խօսիք, որ չեմ հասկանար. այլայլութիւն, կարմրութիւն, լաց, դժգոհութիւն, տաղտուկ. նոր ուսանողներու պէս բառերու կրթութիւն կընէք։ Անկեղծ բարեկամներու մէջ քաղաքավարական կեղծ ձեւերն ամօթ կը համարեմ։ Իրաւ է, որ փոքր ինչ սիրտս ելած է բանի մի համար. բայց ինչու ձեր ներկայութենէն պիտի տհաճիմ. ընդհակառակն աւելի գոհ եմ, որ Ձեր ներկայութեամբ տակաւ ինչ սիրտս կըսփոփի։ Եթէ բարեկամութիւնը, եղբայրութիւնը այս պարագաներուն մէջ չը լլան, ուրիշ ատեն ինչ նշանակութիւն ունին։

Նորայր. — Շնորհակալ եմք բարեկամութեան մասին Ձեր յայտնած սուրբ զգացմանց համար. հաւատք ունիմք Ձեր սրտի անկեղծութեան վերայ. ուստի կը խնդրեմք, որ անպատրուակ ըսէք, թէ ինչ բանի համար սրտերնիդ այդքան ելած է։

Հրահատ. — Կեղծիքը և պատրուակը 'ի սկզբանէ անտի ատած եմ և կ'ատեմ. չեմ ծածկեր Ձեզմէ ինչ որ կըզգամ. գուցէ խնդաք ալ վերաս. վասն զի թերեւս չ'ունենայ ձեզ համար նշանակութիւն այն, որ ինձ համար ծանրակշիռ է. չ'աղդէ Ձեր սրտին, որ զիս կարեւէր կը խոցէ, և չ'այլայլէ զՁեզ, որ ինձ արտասուել կը տայ։ Զարմանալի չէ այս. վասն զի ամեն մարդ մի և նոյն բնութիւնը և մի և նոյն դիւ-

digitised by A.R.A.R.@

բազդացութիւնը չ'ունենար։ Լաւ գիտեմ, որ դուք ալ կարդացած էք լրագրաց մէջ, ինչ որ քիչ մի առաջ ես կարդացի, այն է մեր Գաւառացի ազգայնոց կրած հարստահարութիւն-ներն տեղական քիւրտ Պէյերէն. սիրտս ելաւ, վասն զի այս նոր հարուածներն հին յիշատակներ արթնցուցին, մեր Ազգին 'ի սկզբանէ անտի ունեցած վիճակին պատկերացուցին մտքիս և սրտիս մէջ։ Ի սրտէ կը ցաւիմ, որ մեր Ազգը, ինչպէս այսօր, նոյնպէս առաջնոյն իսկ Թագաւորական հարստութիւն ունեցած ժամանակ, գրեթէ միշտ հալածուած է, միշտ ղահ ինկած է օտար սրերու և միշտ ստնակոխ եղած է օտարներու։ Ահա այս տխուր խորհրդածութեանց մէջ ինկած էի, երբ եկաք։

Ցուսակ. — Հրահատ, ինչու՞ սիտի խնդամք ձեր վերայ. միթէ Դուք միայն ազգին անդամ և զաւակ էք և մեք չե՞մք. միայն Դուք ազգաղու սիրտ՝ և մտածելու միտք ունիք։ Ո՞վ է այն Հայը, որ լսէ իւր եղբարց, իւր հարց, իւր քոյրերուն կրածը և չզգայ, ինչ որ արենակցութիւնը կը պահանջէ. ո՞վ է, որ լսէ ազգայնոց սպաննուիլը և կարեւէր չը խոցի. բայց ի՞նչ օգուտ արտասուքը. ի՞նչ օգուտ զգալը, երբ կը տեսնենք, որ մեր զգալով և արտասուելով ո՛չ անգութին գազանութիւնը կը մեղմի և ոչ մեր եղբարց վիճակը կը բարելաւի։ Եթէ համոզուած էք, որ ողբը, կոծը և արտասուքը անգութ և քարացեալ սրտերը կը կակազայնեն. մեք եւս քեզ հետ մէկտեղ նստիմք ողբամք և լամք ո՛չ թէ մէկ ժամ, ո՛չ թէ մէկ օր, այլ ամբողջ շաբաթներ և ամիսներ. բայց լաւ գիտեմ, որ ասոնց ոչ մին, օգուտ մի չ'ունի բաց 'ի անձնական վնասէն. Նորայր, Դուք ի՞նչ կարծիք ունիք այս մասին։

Նորայր. — Շիտակն ըսեմ, ես այդ տեսակ բաներն մինչեւ հիմա մտածմանս նիւթ ըրած չեմ, որ համոզում և կարծիք կազմած ըլլամ. մինչեւ հիմա այս պատահած դէպքերն ոչ թէ սիրտս, այլ մաղս անգամ շարժած չեն։ Ինչու՞ համար ես իմ սովորական ըղձարթութիւնս և ուրախութիւնս սիտի զոհեմ այս տեսակ մաշեցուցիչ և անօգուտ մտածմանց։ Գաւառացի Ազգայինք կը նեղուին և կը հարստահարուին եղեր, ինչ փոյթս. թող տաք քերնին բանան, որ չը հարստահարուին. միթէ հարստահարողները ձեռք ունին զարնելու, սպաննելու և կողոպտելու, իրենք չունի՞ն գոնէ իրենց անձը, ինչքը և պատիւը պաշտպանելու համար. չունի՞ն ձայն՝ բողոքելու համար. չունի՞ն զգացում և չունի՞ն հոգի, որ շարունակ կը կեղեքուին, կը ծեծուին և միայն տղայոց պէս լալ գիտեն։ Մի՞թէ մեր Նախնիք մեզմէ աւելի ալէկ եւ հանգիստ օրեր տեսած, կամ ունեցած են. եթէ հիմա լեռնաբնակ և վայրենի Քիւրտերն են հարստահարողք. այն ատեն հզօր տէրութիւններ կը հարստահարէին. Պարսից տէրութիւնը մէկ կողմէն. Յոյն քրիստոնեայ տէրութիւնը միւս կողմէն. ապա և Հագարացիք հրով և սրով կ'աւերէին և կ'ապականէին մեր երկիրը. հաղարներով կը կոտորէին և բիւրերով դերի կը վարեին. բայց նոքա չէին յուսահատեր, չէին լքանիր. որչափ կարող էին, այնչափ դէմ կը դնէին. իրենք եւս կը զարնէին, շատ անգամ կը կոտորէին եւ հսկայ բանակներ կը փշրէին։ Ի՞նչ, միթէ այդ Գաւառացւոց երակաց մէջ Հայու արիւնը ցամաքած է. ատոնց մէջ հայկական հոգին, հայկական եռանդն և արիութիւնը բոլորովին մարած են. քաջութեան և դիւցազնութեան երկրին եւ յիշատակաց մէջ կը

digitised by A.R.A.R.@

բնակին և վատութեան թոյնով թրմ-
ած են։ Եթէ իրօք չը կայ դոցա մէջ
այն ոգին, որով Նախնիք օտարին սու-
ը փոտեցուցին, ցաւ զգալն դոցա
վերայ աւելորդ է։ Զեմ ուզեր աւելի
երկար խօսիլ և ոչ զձեզ ստիպել, որ
ինձ պէս անտարբեր լինիք։

Հրահատ. — Ամեն բանի մէջ ծայրա-
յեղ ես և այնպէս կը խօսիս, որ մար-
դոց եղբայրսիրական եւ մարդասիրա-
կան զգացումներն ալ կը ցամաքեցնես։
Որովհետեւ դու ազատ ես մեր Գա-
ւառացի եղբարց կրած նեղութիւն-
ներէն, պոլ պոլ կը ջարդես. եթէ դու
լինէիր նոցա տեղը, արդեօք լալէն ա-
ւելի ուրիշ գործ պիտի տեսնէիր։ Կ'ը-
սես թէ ձեռք չունի՞ն հարստահարող-
ներու դէմ իրենք զիրենք պաշտպանե-
լու. ի՞նչ պիտի կարողանան ընել, ե-
թէ պառկած և քնացած ատենդ, ա-
ւաղակ մի, մարդասպան մի գոյ զին-
ուած՝ գլխուդ վերայ կենայ. արդեօք
պիտի կարողանաս, կամ պիտի փորձես
իսկ անձդ պաշտպանել. թէ լուիկ մըն-
ջիկ նորա գաղանական կրից անձնա-
տուր կը լինիս։ Նորայր, կ'աղաչեմ
ներէք, եթէ սրտիս կսկիծէն լեզուս
իւր չափն անցնէ։ Մեր Աղգին ամե-
նամեծ վէրքն, ամենամեծ վիշտն ու
ցաւն է ինձ և քեզ նման անսիրտ եւ
անողգայ զաւակ ունենալը, որ ոչ թէ
Աղգին օգնելը, այլ նորա դառն վի-
ճակին վերայ սակաւ ինչ խորհիլն եւ
մինչեւ անգամ խօսիլն ամօթ կը հա-
մարիս։ Նախնեաց վերայ կը խօսիս,
նոցա գործքերն եւ այժմեաններուն-
կը բաղդատես, բայց կը մոռնաս դու
զքեզ, կը մոռնաս, որ դու ալ նոցա
որդին ես. որոնք աղգասիրութեան և
եղբայրսիրութեան զոհեր եւ մարտի-
րոսներ էին. իսկ դու այնչափ անզգայ
եւ անտարբեր ես, որ եթէ ամբողջ
Հայութիւնը ջնջուի աշխարհի երեսէն,
հոգ անգամ չես ըներ. աչքիդ մէջ
կաթիլ մը արտասուք և սրտիդ մէջ
դոյն ինչ կարեկցութիւն չը կայ։ Դիւ-
ցազնական յիշատակաց մէջ կ'ապրին
կ'ըսես, և վատութեան թոյնով մա-
հացած են. բայց կը մոռնաս, որ վա-
տութեան ամենամեծն է մարդատե-
ցութիւնը. կը մոռնաս, որ վատու-
թիւն է նա և անտարբերութիւնը և
սառնութիւնը։ Մեր Նախնիք եւս
եթէ մեզ նման խորհէին, մեզ պէս
զգային և մեր սիրան ունենային, պիտի
կարողանային տանել այն դառն ար-
հաւրանաց. պիտի կարողանային դիմա-
գրաւել այն սոսկալի կոտորածներուն.
— անշուշտ սչ։ Նոքա չէին ըսեր մեզ
պէս. թէ՝ մեր ի՞նչ փոյթը. այս ինչ
Գաւառի Աղգայինք կը հարստահար-
ուին, այս ինչ տեղի հայերը օտարին
կատաղութեան գերի կ'ըլլան, այլ ուր-
կէ որ նեղութեան, հալածանաց համ-
բաւ կ'ըստանային, արծուոյ նման դէպ
հոն կը սլանային, ձեռնտու կը լինէին,
կը մխիթարէին, կը խրախուսէին և ա-
մենքը մէկ հոգւով և մէկ սրտով միա-
ցած թշնամւոյն դէմ կը վազէին կամ
հալածական կը վարէին և կամ ամենքը
միասին մէկ սիրով կը զոհուէին. ահա՛
Նախնեաց գործերը. ահա՛ նոցա ոգին,
որոց ես ալ, դու ալ որդիներն եմք.
վա՜յ մեզ։

Ցոասակ. — Խնդիրն ի՞նչ էր, ուր
բերիր եղերեցիր, գրեթէ անձնակա-
նութեան կերպարանք տուիր։ Զեմ
գովեր Նորայրի սառն անտարբերու-
թիւնը աղգայնութեան մասին և սչ
կը պաշտպանեմ, Հրահատ, ձեր չա-
փազանց զգացումներն և դիւրազգա-
ցութիւնը։ Զգացմանց մասին, երկուքդ
ալ հակոտնեայ էք, երկուքդ ալ մէյ
մէկ ծայրն անցած էք։ Իմաստասէրներն
միշտ միջինը առաքինութիւն է կ'ըսեն.
իսկ երկու ծայրերը մոլութիւն կը հա-

digitised by A.R.A.R.@

մորին. ես ալ թէ և իմաստասէր չեմ, բայց կ'ատեմ ծայրայեղութիւնը։ Ար դէն ասայի, կարելի չէ Հայ ըլլալ և անտարբեր մնալ Հայուն տառապանաց։ Այս համոզմամբ, չեմ հաւատար, որ Նորայրի յայտնած դաղափարներն իւր սրտէն բղխած լինին, չեմ հաւատար, որ նորա համոզումն լինին. վասն զի կարելի չէ, որ մարդոյ մէկ անդամն վշտանայ և միւսներն չը վշտանան։ Նորայր, երբ գլուխդ ցաւի ինչ կ'ըլլայ ոտքերուդ, որ քալել չեն ուզեր. ինչ կ'ըլլայ ձեռքերուդ, որ գործել չեն ուզեր, ինչու համար և ուտել չես ուզեր. ուստի ըսել թէ ինչ վայթս է ազգի կրած նեղութիւնը և ցաւը, բնութեան օրինաց դէմ մեղանչել է. վասն զի ինչպէս է առանձինն մարդը, նոյնն է և ամբողջ ազգ մի. վասն զի ազգ մը անհատներէ կը կազմուի։ Հրահատ, կը տեսնես, որ ես եւս քեզ չափ կը զգամ, որ ես ալ քեզ չափ ըղձակերա կը փափաքիմ, որ ազգը երջանիկ օրեր ունենայ. սակայն դարձեալ կ'ըսեմ, թէ ինչ օգուտ ողբալէն և ինչ օգուտ արտասուելէն. Աստուած ինքը ողորմի նորա դժբաղդութեանը։

Նորայր. — Հրահատ, դու զիս իմ անտարբերութեանս համար ամենավատ անուանեցիր. Դու ալ գրեթէ անոր մօտ բան մի, Ցուսակ. չեմ բարկանար այս մասին ձեզ դէմ եւ չեմ ալ ուզեր փոխարինել. այլ միայն կը հրաւիրեմ, որ սակաւ ինչ մեղմենք լեզուներս, սակաւ ինչ չափաւորեմք կիրքերնիս և զգացումներս. քիչ մը ես ձեզ մոտիմ, քիչ մը եւս դուք ինձ, և աւելի խոհուն ու հանդարտ խօսիմք։ Հրահատ, իրաւ է, որ գաւառացիք չարաչար կը հարստահարուին, չարաչար կը խոշտանգուին և շատ անգամ կը սպաննուին. բայց ինչ կարող եմք ընել. կարելի է վայրենի դաղաններէ գութ և կարեկցութիւն սպասել. կարելի է հարստահարողն իւր զէնքերէն կապտել. — կարծեմ ոչ. բայց ինչ անուն տամք, ինչ ըսեմք Հայ — հարստահարողներուն, որք օտարէն աւելի անխիղճ են և աւելի կատաղութեամբ կը փորեն Հայութեան հիմունքը. վասն զի եթէ օտարը մեր ազգին նիւթական հացին և նիւթական կեանքին թշնամի է. ընտանի հարստահարողներն նորա բարոյական հացը կը յափշտակեն և բարոյական կեանքն 'ի մահ կը թունաւորեն։ Ի՞նչ ըսելու է այդ խումբ մի ազգատեաց Հայերուն. որք ոչ տգէտ են, ոչ անկրօն և անասուած. բայց իրենց ամենօրեայ նենգութիւններով եւ խարդաւանութեամբք ազգը կը պառակտեն, կը յուզեն և կը խռովեն. տեղ մը առաջնորդական խնդրով՝ ուրիշ տեղ մը Սահմանադրութեան և երրորդ տեղ մի հրահանգի խնդրով հայը՝ հայուն դէմ կը յարուցանեն, եղբայր՝ եղբօր դէմ կը զինեն։ Ի՞նչ ըսելու է այդ ազգակործան անձանց, որք թէ եւ ազգին պատիւը, ազգին կեանքը պաշտպանելու կոչումն ու պարտաւորութիւնը ունին. բայց ինքեանք իբրեւ ցեղ կը կրծեն նորա կեանքը և իբրեւ սրբապիղծք՝ կ'արատաւորեն նորա պատիւը։ Չէ՞ք տեսներ այս ամենը, չէ՞ք զգար այս ցաւալի և դառն հարուածները, որովհետեւ ընտանի ձեռքերէ կը տրուին։ Ինձ համար բան մի չէ օտարին ըրածը այս մարդադէմ ճիւաղներուն ըրածին քով։ Կը մեղադրէք զիս, որ անտարբեր եմ Ազգին վիճակի նկատմամբ և վատ կ'անուանէք զիս. բայց ես վատ չեմ, այլ նոքա են, որ իրենց շահասիրութեան եւ անձնական կրից կը զոհեն Ազգին օգուտը, յառաջադիմութիւնը և ապագան։ Եթէ դուք

digitised by A.R.A.R.@

ալ իմ տեսակէտէս դիտէք և ինձ պէս խորհիք, ինձմէ աւելի անտարբեր կը ըլլաք և դուցէ անիծանէք զձեզ՝ որ Հայուն մէջ ծնած էք և Հայ անունը կը կրէք։

Հրահաւ.—Ճշմարիտ են ըսածներդ. ցաւալի է, որ Հայն զՀայը կը հալածէ. սակայն պէտք է վատերու գործքէն գայթակղիլ. պէտք է արդէն անկեալ ազգի մը ոտքի հարուածի մի ալ տալ, որ աւելի ընդ երկար մնայ իւր անկեալ վիճակին մէջ. պէտք է, որ վատերուն հետ վատ ըլլանք. աշխարհի երեսէն ելբ պակասած են վատերը։ Առաջին մարդոյ օրէն սկսեալ քայլ առ քայլ եկ դէպ 'ի մեր օրերը. ամեն դարու մէջ եւս եկած են ատոնց նմանները։ Սակայն եթէ ամեն դարու մարդիկ ալ ըսէին մեղ պէս, որովհետեւ մեր մէջ կան այնպիսիներ, որ ընկերութեան խաղաղութիւնը կը խռովեն, ընկերութեան յառաջադիմութիւնը կ'ոտնհարեն, մեք ալ նմանիմք անոնց. եթէ այսպէս ըսէին, աշխարհ վաղ հիմա 'ի վեր եղած էր. մարդկային ընկերութիւնը ջնջուած և ամեն օրէնք ու կանոն անյիշատակ ոչնչացած պիտի ըլլային. սակայն ոչ. չըսին և չըրին այնպէս, այլ ընդհակառակն մարդատեացներու դէմ՝ մարդասէրներ եկան. աշխարհաքանդ անձանց հակառակ՝ աշխարհաշէն մարդիկ եկան եւ անօրէններու փոխանակ՝ օրինասէրներ եւ օրէնսդիրներ եկան։ Առաքինութիւնը ի՞նչ նշանակութիւն ունի, երբ մոլութիւնը իրեն ոսոխ չունենայ. ոսկիին յարգը ո՞ւր պիտի ճանաչէր, եթէ պղինձ չը լլնէր աշխարհի երեսին։ Այսպէս ալ ազգի մը մէջ եթէ անձնասէրներ չը լլնին, ո՞ւր կը մնայ անձնուէրներու մրցանակը. եթէ ազգատեացներ չը լլնին, ի՞նչ փառք ազգասիրաց։ Ուրեմն ոչ թէ այդ շահասէր անձանց պատճառաւ անտարբեր պիտի մնամք. այլ ընդհակառակն մեր ջանքը, մեր զոհողութիւնը պիտի կրկնապատկենք, որ կարող ըլլամք թէ օտար և թէ ընտանի թշնամեաց հասուցած չարիքներն դարմանել։

Յոսակ.—Նորայր, ես ալ կ'ընդունիմ մասամբ ըսածներդ. վասնզի ինձ համար եւս ճշմարիտ են, որ մեր թշնամիներն չեն այնչափ օտարներն, որչափ Հայանունն կրող, բայց հայութեան նախանձնք և արատ բերող կարգ մը անձինք, որք ոչ Աստուծմէ կ'երկնչին և ոչ մարդիկներէն կ'ամաչեն։ Ես ալ այն գաղափարն ունիմ, որ ազգ մի չը կործանիր արտաքին հարուածներէ. բայց ներքին երկպառակտութիւններն, ներքին վէրքերն ու հարուածներն կը նմանին անբժշկելի այն ախտին, որ մարդոյ ներքին կողմէն կը սկսի, տակաւ առ տակաւ կուտէ և կը սպառէ ներքին կենսական նիւթերն, կը խանգարէ և կ'ապականէ ներքին կազմութիւնը եւ 'ի վերջոյ 'ի հող գերեզմանի կ'իջեցուցնէ։ Սակայն կը մերժեմ վերջին խօսքդ, որ ըսիր թէ, Եթէ դուք ալ իմ տեսակէտէս դիտէք և ինձ պէս խորհիք ինձմէ անտարբեր կ'ըլլաք և թերեւս անիծէք ձեր անձը, որ Հայ ծնած էք։ Ինչու համար մեք զմեզ պիտի անիծենք. քու թուած չարիքներդ ո՞ր ազգին մէջ չկան. ո՞ր ազգին մէջ չը կան անձնասէրներ. ո՞ր ազգին մէջ չը կան եսասէրներ. ո՞ր ազգին մէջ չը կան մարդատեաց եւ ազգատեացներ։ Բայց ո՞ր լաւ մարդն ուրացած է իւր ազգութիւնը ապիրատներու երեսէն. ո՞ր բարեսէր հոգին իւր անձն անիծած է, որ արենակից գտնուած է անպիտան մարդկանց։ Ազգն ուրանալ, կը նշանակէ զԱստուած ուրանալ. վասն զի Նա դրաւ մեր մէջ մարդասիրական և եղբայրսիրական սուրբ զգացումը. վասն զի կա-

digitised by A.R.A.R.@

բելի չէ առանց ելքայրսիրութեան զաս-
տուած սիրել։ Ինչու՞ պիտի ուրանամք
Հայութիւնը. արդէն Ազգին վատ և
անպիտան զաւակները իրենց ազգա-
վնաս գործքերով զատուած եւ մեր-
ժուած են Ազգէն. միթէ այս վերքը
բաւական չէ՞։ Նորայր, լեզուներս չա-
փաւորելու հրաւիրեցիր, բայց չես մը-
տածեր թէ ինչ կը հոսի լեզուէդ. չես
զգար թէ ինչպիսի խոսքեր կը թռին
շրթունքներէդ։ Եթէ մեզ նման ան-
ձինք, որ քիչ շատ ուսումնականի և
կրթեալի անուն ունիմք, այդպէս յու-
սահատ խոսիմք. ապա ինչ ընէ ռա-
միկը, որ բնաւ ազգութեան գաղափար
չունի. ինչ օգուտ և ինչ բարիք կա-
րելի է սպասել խեղճ հասարակու-
թենէն, որ ոչ զգիրս եւ ոչ զլեզու-
թիւն գրոյն գիտէ։

Այս միջոցին Արքուն կը գայ եւ կը
բարեւէ. — Բարեւ ձեզ բարեկամներ։

Երեքն ալ ոտքի ելլելով. — Ասուծոյ բարին։

Արքուն. — Ի՞նչ բարեբաղդութիւն,
որ զձեզ երեքդ ալ 'ի մի խմբուած կը
գտնեմ։ Բայց մի՞ գուցէ առանձին
գործով մի զբաղած էիք և ես խափան
եղայ գալստեամբս. կ'աղաչեմ, ան-
կեղծութեամբ ըսէք։

Հրաչեայ. — Ի՞նչ առանձին գործ պի-
տի ունենամք. Ազգին ներկայ տագ-
նապալից վիճակին վերայ կը խոսէինք,
որ ամենուս կը պատկանի. թէ և Նո-
բայր ինքզինքը ազատ կը համարի այս
պարտաւորութենէն. որովհետեւ ազ-
գին մէջ շահադեստներ կան եղեր. տը-
ըամաբանութիւն մի, որ նմանը չունի։
Շատ ուրախ եմք, որ եկաք, որովհե-
տեւ ես և Ցուսակ չը կարողացանք
համոզել զինքը, որ ամեն անհատ
պարտաւոր է Ազգին ինչպէս բարօրու-
թիւնը եւ երջանկութիւնը, նոյնպէս
թշուառութիւնը և ցաւը իրեն ան-
ձին համարելով՝ ըստ այնմ աշխատիլ
դարմանելու համար. թերեւս Դուք
կարողանայք համոզել։

Նորայր. — Պահ մը առաջ Հայ հա-
ըրստահարողներ մատնանիշ առնելով՝
կարծեցի թէ բաւական պարզ խոսե-
ցայ. սակայն դարձեալ չեմ կարողա-
ցած միտքս և զգացմունքս լաւ բա-
ցատրել. ուստի քիչ մը աւելի բացա-
յայտ խոսիմ։

Բարեկամներ, ինչ կ'ուզէք, ինչ
բանի կ'ուզէք համոզել զիս. Ազգին
ցաւն զգալ. սեպեմք, որ զգայի. ազ-
գին բարեկեցութեան վերայ խորհիլ,
դարձեալ սեպեմք, որ խորհեցայ եւ
պիտի խորհիմ և վերջապէս ամեն մա-
սին անտարբերութիւնս մէկ կողմ դը-
նեմ. սակայն ասկէց ինչ հիմնական օ-
գուտ կրնայ յառաջ գալ։ Իրաւ է,
որ ազգի մը կեանքին մէջ անհատները
մեծ դեր ունին. բայց ոչ թէ մեր ազ-
գին նման իր թշնամիներն ու բարե-
կամներն զանազանելու անկարող ազ-
գի մը մէջ։ Կ'ուզէք գլուխնիս ճաթե-
ցընեմք պոռալով ազգին՝ թէ արթնը-
ցիր կորստաբեր թմրութենէդ. զգա
վիճակիդ ծանրութիւնը, կործանման
վէին եզրն հասած ես. բայց անօգուտ,
չը պիտի լսէ մեզ, աւելի պիտի հաւա-
տայ անոնց, որոնք իւր տան հիմունք-
ը կը փորեն. պիտի հաւատայ այն
անձնասէրներուն, որք աննշան շահու
մի ակնկալութեամբ ազգը և ընդ նմին
իրենց պատիւն ալ օտարին կը ծախեն։
Ահա այսպիսի պարագաներն են, որ
զմարդ անտարբերութեան եւ մինչեւ
անգամ անզգայութեան կը վարժեցը-
նեն. այս օրինակ պարագաներն են, ո-
րոնք մարդը կը լքանեն և յուսահա-
տութեան կը մատնեն։

Թողուցք ասոնք մէկ կողմ. դար-
ձեալ կը կրկնեմ և կ'երեքնեմ, թէ մեք
ինչ կարող եմք առնել. Ազգին որ ցա-

ւուն դարման մը կրնամք գտնել. երբ ազգին բարոյական և նիւթական բարեկեցութեան հոգ տանելու պաշտօն ունեցող Վարչական մարմնոց մէջ այնպիսի զշաքաղ մարդիկ կան, որք իրենց քսակը լեցնելու և իրենց անձնական կիրքն յառաջ քշելու համար չը մնար չարիք, որ չը գործեն. և հասարակութիւնը փոխանակ այդպիսի օձերուն և իժերուն գլուխը ջախջախելու, թողած իւր կենսական խնդիրներն, թողած մատաղ մանկտուոյն դաստիարակութեան փրկարար խնդիրն, այդ ապիրատներուն կամաց և կրից գերի եղած է։ Ի՞նչ պիտի ընեմք. լուսաւորեմք պիտի ասէք ժողովուրդը.—քանի փարայի կ'առնէ մեր լուսաւորութիւնը. տակաւին կ'ուզէք շատ յառաջ երթալ. կը մատնեն զմեզ կառավարութեան իբրեւ խռովարար և ազգը երկպառակող. այս մասին միթէ քիչ օրինակներ կան։ Ուստի նորէն կ'ըսեմ, որ մեր ազգին հարստահարիչները չեն լեռնականներն, չեն քիւրտերը, այլ նոյն իսկ հայերն են. ուրեմն թողուլ սուրի հարուածները, թողուլ գաշոյնի վերքերը եւ ասղան ծայրի վերքն հոգալ և դարմանել՝ յիմարութիւն է և երկոյս յիմարութիւն։

Հրահաւ. — Վերջին խօսք մի եւս ըսեմ և բաւական է. թող քիչ մը ալ Արքունը խօսի։ Նորայր, կըսէք թէ մեր Վարչական մարմնոց մէջ այնպիսի զշաքաղ անձինք կան, որք միայն իրենց անձը, իրենց փորն ու քսակը լեցընելու ետեւէ են։ Ճշմարտութիւն մի է այդ, թէեւ ցաւալի ճշմարտութիւն. սակայն որո՞ւ է յանցանքը, այդ մարդիկը ազգին պաշտօնեայ ծնած են իրենց մօրմէն, թէ վերջէն եղած են. 'ի հարկ է վերջէն այդ կոչման և իրաւանց տէր եղան։ Ո՞վ կոչեց ատոնք 'ի պաշտօն. ո՞վ տուաւ իրաւունք պաշտօնէութեան. ո՞չ ապաքէն ես, դուն և մեզ նման ուրիշները. ուրեմն մեզաւորը մեք ենք, որ վատ ու մոլի անձինք պաշտօնի կոչած ենք։ Այս տեղ այնպիսի երկսայրաբանութիւն մի կայ, ուրկէ ո՛չ մի կերպով կարելի չէ ազատիլ. վասն զի եթէ մեք առաջուն կը ճանաչէինք, ինչու այդ իրաւունքը տուինք, որ մեզ դէմ զէնք չունելով ըզմեզ հալածեն. իսկ եթէ չէինք ճանաչեր, ինչպէս չը ճանչցած մարդկանց յանձնեցինք մեր պատիւն ու կեանքը։ Կը տեսնէս, որ այս ամենը անտարբերութեան հետեւանք է միայն. եթէ հասարակութիւնը անտարբեր չը լինէր, մինչեւ հիմա հազար անգամ ատոնց չափը կարող էր տալ. կարող էր գոյա տեղ աւելի արժանաւորները, աւելի անձնուէրները ընտրել, որք Ազգին օգուտը, ազգին բարին և յառաջադիմութիւնը իրենց անձնական շահէն վեր դասելով նորա բարօրութեան համար կը խորհէին և կ'աշխատէին։

Արքուն. — Բարեկամնե՛ր, եթէ ներ էք, ես ալ խօսք մի ըսեմ. ես ալ Ազգին ներկայ տխուր վիճակի մասին իմ համոզմանս եւ կարծեացս ազգատիկ լուման խառնեմ Ձեր հարուստ խորհրդածութեանց հետ։

Երեսը մէկ տեղ. — Խօսէ՛, խօսէ։

Արքուն. — Ամեն տեսակ հարստահարութիւնք, որք կարկտի նման մեր ազգին գլխուն կը տեղան. հարստահարութիւն օտարէն, հարստահարութիւն ընտանիէն, հարստահարութիւն Աւետարանի, կրօնի և Աստուծոյ անուամբ, հարստահարութիւն ազգատութեան, հարստահարութիւն պանդխտութեան, ամենքն ալ ազգատութեան ծնունդք են. չը կայ ուրեմն հարստահարութիւն չար քան ըզազգատութիւն։ Բարեկամնե՛ր, կար-

digitised by A.R.A.R.@

ծեմ Դուք օտարէն և ընտանիէն եղած հարստահարութիւնը միայն խօսքի նիւթ ըրած էիք. բայց մոռցած էք տգիտութեան հարստահարութիւնը, մոռցած էք և անկէ յառաջ եկած պանդխտութեան հարստահարութիւնը։

Պանդխտութիւնը մեր ազգութեան քաղցկեղն է. կը խոպանացնէ Հայոց արդասաւոր դաշտերը. կը ցամաքեցընէ Հայոց ծաղկաւէտ պարտէզները. կ'ամայացնէ Հայոց տուներն եւ շատ դերդաստաններ խլաւ կը շինուցանէ։ Աչք մի ձգեմք քիչ շատ ծաղկած քաղաքներուն վերայ, աչք մի՝ մանաւանդ Պոլսոյ վերայ. ամեն փողոց, ամեն անկիւն և ամեն իջեւան հայ պանդուխտներով լցուած են։ Դոքա ամենքն ալ ընտանեաց տէր են և մատաղահաս զաւակաց հայրեր. բայց աղքատութենէ հարստահարեալ՝ թողած են իրենց ընտանիքներն, թողած իրենց սիրելի ամուսինները և թողած են իրենց հոգեհատոր զաւակներն։ Քանի՞ արտասուելի է պանդուխտին կեանքը, կեանք անմաքուր, անտուն և վարատական. երեկոյին կը դառնայ իւր դիժոխանման իջեւանը վաստակաբեկ. ուժաթափ և շատ անգամ ինասեալ անդամներով։ Զը կայ հոն ընտանեկան միխիթարութիւն և չը կան հոն ամուսնոյ և զաւակաց մտերմական նայեցք, որք առանց ձայնի, առանց խօսքի կարողեն քաղցրացնել ամենադառն կեանքն անգամ։ Այսպէս Հայաստանի զաւակներն կը մաշեն և կըսպառեն իրենց երիտասարդութիւնը, իրենց ուժն ու զօրութիւնը դառն պանդխտութեան մէջ առանց յիշելու, որ հայրենի երկրին մէջ, հայրենական տան մէջ ունին ամուսին, որ գիշեր ցորեկ վշտաբեկ սրտով և արտասուաթոր աչօք իրենց վերադարձին կըսպասէ. կան մատաղ մանուկներ, որք կարօտ պատառ մի հացի՝ դերի մնացած են ծայրագոյն թշուառութեան ձեռքը։ Ո՞յք են այդ զարկեշտասուն հայ կանանց հարստահարողներն. — ոչ ոք. բայց 'ի իրենց երիկ մարդիկներէն. ո՞ք են այդ անմեղ եւ աղաղրի մանկանց թշուառութեան պատճառ, ոչ ոք. բայց 'ի իրենց հայրերէն։ Ահա գլխաւոր և հիմնական պատճառ աղգի մը կործանման. ահա մեծ հարստահարութիւն։ Շատ սրտացաւ խօսքեր ունիմ. բայց ի՞նչ օգուտ խօսելէն. ի՞նչ օգուտ վերաւորուելէն և վերաւորելէն։ Համառօտ խօսելով՝ մեր Ազգին կեանքը Մարգարէին նկարագրած կեանքին կը նմանի, «Ամենայն գլուխ 'ի ցաւս, ամենայն սիրտ 'ի տրտմութիւն. յոտից ցգլուխ չկայ 'ի նմա առողջութիւն, ոչ վերք, ոչ այտուցմն, ոչ հարուածք խոցելիք, չկան սպեղանի 'ի վերայ դնել, ոչ ձէթ եւ ոչ պատանս»։ Այսպիսի վերաւորեալ կեանքի մը բժշկութիւնը անհնար է մարդկանց ձեռքով, անհնար է մարդկային ճարտարութեամբ և արուեստով. այլ միայն երկնից նախախնամող այցելութեամբ կը բժշկուի. ուստի պէտք է խօսելէն աւելի մաղթեմք, խօսելէն աւելի աղօթեմք եւ սրտագին խնդրեմք, որ Աստուած գթալով ողորմի մեր տառապակիր ազգին. բժշկէ նորա բաղմադիմի վէրքերն եւ պարգեւէ աղատութիւն նիւթական հարստահարութենէ, աղատութիւն բարոյական հարստահարութենէ և աղատութիւն 'ի տգիտութենէ։

Ոտքի վերայ եղկեղով գլուխնին կը բանան եւ երկիւղած դիրքով կը կենան. ուրիշներն կ'երգեն

«Տէր կեայ՝ ՝ո՝՝ ՝ՀԱՅ՝՝» Մաղթանքը։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐԵԽՆԱՄ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԵՒ ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀԱՐՔ

Մարդկային, Քրիստոնէական եւ որդիական պարտաւորութիւն մի կը թելադրէ մեզ այսր հանդիսականացդ ներկայութեան յատեան ելանել եւ քանի մի խօսք թոթովել։ Ուստի խոնարհաբար կը հայցեմ ձեր ներողամիտ ունկնդրութիւնն մի քանի հակիրճ եւ սրտաբուղխ խօսքերուս, զորս 'ի դիմաց համօրէն ընկերութեացս կ'արտասանեմ երախտագէտ սրտիւ։

"Որ ոք արբուսցէ միում 'ի փոքրըկանցս յայսցանէ՝ բաժակ մի ջուր ցուրտ... ոչ կորուսցէ զվարձս իւր"։ զայս խօսեցաւ Աստուածային բերան, այսպէս Աւետարանեց մարդկային ազգի Փրկիչն և Նուիրագործեց բարերարութեան մեծ եւ Աստուածահաճոյ գործն, խոստանալով գաւաթ մի պաղ ջուր խմցուողին վարձն իսկ հատուցանել։ Ամէն կը հոլովին, դարք կ'անցնին, ազգք կը կործանին և յաղթանդամ ծառք և շինուածք կը տապալին եւ կ'անհետանան, բայց բարերարաց յիշատակն եւ անունը անջինջ են և պիտի մնան յաւիտեան, նոցա երախտագէտ սրտերու մէջ կանգնած մի ամենափոքր շինուածն, ամենադոյզն բարերարութիւնն անքակտելի պիտի մընայ մինչեւ ցօր հատուցման օր դատաստանի և վարձատուութեան։ Ոչքա իրենց բարերարութեամբն իշխանութիւն ունին մարդոյ սրտին վերայ, իշխանութիւն կ'ըսեմ ոչ տիրապետական այլ իշխանութիւն հայրական, իշխանութիւն բարեգործական. ահա, որչափ քաղցր է սոյն իշխանութիւնը թէ՛ իշխողաց և թէ՛ իշխեցելոց համար։

Այսօր Սրբազան Հայր, համայն հանդիսականաց առջեւ պարտք կը համարիմ երախտագէտ ոգւով խոստովանիլ որ դուք եւս Միաբանութեամբդ հանդերձ ունիք սոյն յաւիտենական իշխանութիւնը մեր ամենուս սրտին վերայ, և ձեր բարերարութեան յաւերժական փառաւոր կնիքը դրոշմած էք Սանուհեացս սրտից և հոգւոյ մէջ։ Որչափ ուսանիմք որչափ յառաջադիմեմք, այնչափ աւելի պիտի սիրեմք ձեր անունը և աւելի քաջ պիտի ճանաչեմք ձեր բարեգործական վեհ իշխանութիւնը. վասն զի աւելի երախտագէտ պիտի լինիմք։ Եթէ ծարաւելոյն բաժակ մի ջուր արբուցանելն, իւր յիշատակն ունի յաւուր հատուցման. քանի՞ եւս առաւել Ձեր անունը Ձեր մեծ բարեգործութիւնը, որով կ'արբուցանէք մեր պապակեալ սիրտն ու հոգին ուսմամբ եւ դաստիարակութեամբ, մեծ է Ձեր բարերարութիւնը. անմահ է Ձեր յիշատակը. վասն զի Ազգ մի լիովին երախտապարտ է Ձեզ. զմեզ կրթելով Ազգ մի կ'երախտաւորէք, կրթեալ մայրեր պատրաստելով բարեկիրթ զաւակունք կը պատրաստէք, ներկային հետ ապագայն կը լուսաւորէք, անհատից հետ ամբողջ Հայ Ազգը կ'երջանկացնէք։ Ուստի օրհնեալ է Ձեր անունը և օրհնեալ է համայն բարեջան Միաբանութեանդ և բարերարաց յիշատակը յաւիտեան։

Որդիական ակնածութեամբ խոնարհաբար կը հայցեմք Սրբազնութենէդ եւ համայն բարերարներէ ընդունել մեր՝ Սանուհեացս երախտապարտ սրտից շնորհակալու զգացմանց հաւատին։

Եւ 'ի մասնաւորի խորին շնորհակալութիւն կը մատուցանեմք նաեւ այն ուսումնասէր եւ բարեխոհ հանդիսականաց, որք արժէք տալով մեր ձեռագործ աշխատանաց և ներկայանալով հանդիսիս պատուեցին Վարդ-

digitised by A.R.A.R.@

ժարանն և քաջալերեցին զմեզ և եւս յառաջադիմել ուսման և կրթութեան ասպարիզին մէջ. այս եւս մեծ բարերարութիւն է մեզ համար։

Ի վերջոյ, խոստովանելով մեր անկարողութիւնն 'ի փոխարինութիւն Ձեր անբաւ բարութեանց, սրտագին բարեմաղթութեամբ հայցեմք յԱմենաբարի Արարչէն ընդ հովանեաւ ամենառատ խնամոցն անսասան պահել զՍուրբ Աթոռս յաւիտեան, շնորհել Սրբազան Հօրդ, բարեջան Միաբանութեանդ և համայն Ազգային բարերարաց երկար եւ երջանիկ կեանս եւ բարերարութեանց փոխարէն իւր անհուն գանձէն պարգեւել 'ի փառս իւր և 'ի շինութիւն լուսեան Ազգիս։

ՀՐԱՒԻՐԱԿ
ՄՕՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳԱՐՈՒՆ

Ցրտամարսուրդ սառնամանիք ձըմերան
Փախստական գնացին յերկրէս բացական,
Սիւգ ջերմագին անկեալ զօդովքս ադինեան՝
Բացան դըրունք յաւէտաղուարձ սուրբ գարնան։
Օ՜ն հայկազունք յարեգդեմ
Ցաստուածատուն 'ի յեղեմ։

Զայն սահանաց յանձաւախորքս լերանց
Եւ խոխոջիւն գարնանաղբյր հեղեղաց՝
Հուսկ հառաչք են հեծեծանաց հիւսիսին
Որ գետալէժ արձակէ զբունչ իւր յետին։
Օ՜ն հայկազունք յարեգդեմ
Ցաստուածատուն 'ի յեղեմ։

Վարդ եւ շուշան փթթինաղարդք 'ի հովտին
Խումբ պար առեալ փայլին 'ի ցող կենսածին,
Իբր աստեղաց բոյլքն յեթերին 'ի կամար
Ճաճանչագեղ շողան 'ի լոյս վառ 'ի վառ։
Օ՜ն հայկազունք յարեգդեմ
Ցաստուածատուն 'ի յեղեմ։

Վտակ վճիտ սահեալ հեղիկ ընդ մարմանդ՝
Զուխան անուշակ ջամբէ ծաղկանց երփնաղարդ,

digitised by A.R.A.R.@

ՑՈՒՑԱԿ

ԸՍՏԻՄԱՆԱՑ ՏԵՂԵԿՆ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐՑԱՐՈՒՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ

ԱՇԱԿԵՐՏԱՑ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆ 1875-1876 ԱՄՍ

ԱՆՈՒԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԱՑ	Հայերեն-ից	Աշխարհագրութեան	Պատմութեան	Թուաբանութեան	Նկարչութեան	Լեզուագիտութեան	Լեզուագիտութեան դասի	Տաճկերէն	Գրականութեան	Ընդհանուր դասի	Հնագոյն դասերէն	Նոր կրօնական դասի	Գեղագիտութեան	Վարք	Մասնաւոր
1 Կարապետ Յովհաննեան Նիկոմիդացի.	5	5	5	5	5	5	5	5	5	5	.	.	.	5	Ա
2 Կարապետ Յովհաննէսեան Իզմիրցի.	5	5	5	5	5	5	5	5	4	5	.	.	.	5	Ա
3 Պօղոս Յարութիւնեան Նիկոմիդացի.	5	5	5	5	5	5	5	5	4	5	.	.	.	4	Ա
4 Սմբատ Տ. Ղազարոսեան Օէյթունցի.	5	5	5	5	4	5	5	5	5	5	.	.	.	4	Ա
5 Սողոմոն Գրիգորեան Երուսաղէմացի.	5	4	5	4	4	5	5	5	4	5	.	.	.	4	Բ
6 Մանուկ Օգանեան Օէյթունցի.	5	4	4	5	3	4	5	4	4	5	.	.	.	5	Բ
7 Գրիգոր Կիրակոսեան Բուռնացի.	4	4	4	4	5	4	5	4	4	5	.	.	.	4	Բ
8 Թէոդիկ Ներսէսեան Ընթացքի.	5	3	4	3	4	4	4	4	4	5	.	.	.	3	Բ
9 Մկրտիչ Բեհոփեան Էջմիածնցի.	3	4	4	3	4	5	4	4	3	4	.	.	.	4	Բ
10 Յարութիւն Մարտիրոսեան Դամասկացի.	5	5	5	5	5	5	5	5	4	.	.	.	.	4	Ա
11 Գրիգոր Պողոսեան Ճմշկածագցի.	5	5	5	4	4	4	5	5	4	.	.	.	.	5	Ա
12 Սերովբէ Դաւթեան Իզմիրցի.	5	5	5	5	5	4	5	5	5	.	.	.	.	4	Ա
13 Ղազարոս Մարտիրոսեան Պրուսացի.	5	5	5	4	4	5	4	5	4	.	.	.	.	4	Բ
14 Թէոդիկ Թորոսեան Երուսաղէմացի.	4	4	5	4	4	5	4	4	4	.	.	.	.	4	Բ
15 Եսայի Աբրահամեան Երուսաղէմացի.	5	5	5	4	3	5	3	4	4	.	.	.	.	4	Բ
16 Մարգար Յովհաննէսեան Երուսաղէմացի.	5	5	5	4	3	4	4	3	4	.	.	.	.	4	Բ

18 Գրիգոր Յակոբեան Եգիպտացի.	3	4	4	4	4	4	2	3	3	.	.	.	.	4	Բ
19 Աթանաս Առաքելեան Շամախեցի.	4	5	5	4	4	3	4	2	3	.	.	.	.	4	Բ
20 Ստեփան Աբրահամեան Կեսարացի.	3	4	4	4	3	4	3	4	3	.	.	.	.	4	Բ
21 Սարգիս Կարապետեան Դամասկացի.	3	5	5	4	3	4	2	3	2	.	.	.	.	4	Բ
22 Գրիգոր Գէորգեան Երուսաղէմացի.	2	4	3	4	4	5	2	3	3	.	.	.	.	4	Գ
23 Յարութիւն Մկրտչեան Օէյրթունցի.	3	3	4	3	3	4	2	3	2	.	.	.	.	4	Գ
24 Յովհաննէս Գէորգեան Մաշկերոցի.	5	5	5	5	4	5	.	.	.	.	5	5	4	5	Ա
25 Միսէն Յակոբեան Երուսաղէմացի.	5	5	5	5	4	5	.	.	.	.	5	5	3	5	Ա
26 Գրիգոր Ստեփանեան Թալասցի.	5	4	5	5	3	4	.	.	.	.	5	5	3	5	
27 Միսաք Աբրահամեան Մէջի.	4	5	5	4	4	4	.	.	.	.	5	5	4	4	Բ
28 Յակոբ Յակոբեան Բիրլիսցի.	4	5	5	5	4	5	.	.	.	.	5	4	4	4	Բ
29 Յարութիւն Յովսէփեան Երուսաղէմացի.	5	4	5	5	3	4	.	.	.	.	5	5	2	4	Բ
30 Գրիգոր Յակոբեան Բիրլիսցի.	4	4	4	4	2	5	.	.	.	.	4	5	3	5	Բ
31 Յակոբ Պետրոսեան Աշնեցի.	4	4	5	3	2	2	.	.	.	.	5	5	2	5	Բ
32 Աբեսիս Յովսէփեան Լաւոդիկիացի.	4	4	4	4	3	2	.	.	.	.	4	4	2	5	Բ
33 Սահակ Պապոյեան Երուսաղէմացի.	4	4	4	4	2	5	.	.	.	.	4	4	2	4	Բ
34 Կիրակոս Խաչատուրեան Տիգրանակերտցի.	4	4	4	4	3	3	.	.	.	.	4	4	3	4	Բ
35 Յովսէփ Աբրահամեան Բէհեսնցի.	5	5	4	4	3	1	.	.	.	.	4	4	2	4	Բ
36 Խաչատուր Սարգսեան Բէհեսնցի.	4	4	3	4	3	1	.	.	.	.	3	4	2	5	Գ
37 Մովսէս Կարապետեան Երուսաղէմացի.	3	4	4	3	2	3	.	.	.	.	4	4	2	4	Գ

38 Թովմաս Մեղրիկեան Տրապիզոնցի. } Կը պատրաստուի յառաջիկայ Չորրորդ Դասարանին համար։
39 Սարգիս Յովսէփեան Դասապցի. } Կը պատրաստուին Առաջին Դասարանի համար։
40 Աբրահամ Եգիպտացի

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Ա. Վարժարանը, վերոգրեալ աշակերտներէն զատ, ունի նաեւ մէկ աշակերտ—Աւետիս Կարապետեան Զօրսեցի—որ անցեալ տարւոյ շրջանին Դ. Դասարանի աշակերտներէն է, և Գաղղիարէնի, Տանիերէնի, բնագիտութեան, գրաչարի և նկարչութեան ուսմանց դաստուրեամբ հանդերձ՝ Վարժարանի մէջ դաստատութեան եւ կառավարչութեան մասնաւոր պաշտօններ կը վարէ, որոց համար Տեսչութիւնը իւր գոհունակութիւնը կը յայտնէ։

Բ. Իւրաքանչիւր առարկայի տակ նշանակուած թիւերը աշակերտաց մէջ տարւոյ շրջանին մէջ ունեցած աշխատասիրութեան եւ տարեկան հարցաքննութեան միջին թիւերն են։